




ԷԼՄԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



**ԷԼՄԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**



**Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2019**

Էլմա Պարսամյան. Գիտական գործունեությունը
Խմբագիր Ա. Մ. Միքայելյան – Երևան, «Գիտություն» հրատարակչություն, 48 էջ:

Գրքում ամփոփված է Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ՝ Էլմա Պարսամյանի կյանքի գիտական և մանկավարժական գործունեությունը: Սա մանրամասն ակնարկ է Է. Պարսամյանի կենսագրական տվյալների, կրթության, հետազոտական հիմնական ոլորտների, գիտական և հանրամատչելի հրապարակումների և այլ տեղեկությունների մասին: Գրքում նաև ներառված են Պարսամյանի մի շարք լուսանկարներ, ինչպես հայտնի աստղագետների այնպես էլ հասարակական գործիչների հետ:

ՀՏԴ 52
ԳՄԴ 22.63

ISBN՝ 978-5-8080-1400-8

© ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվ.
Բյուրականի աստղադիտարան, 2019



1974

Նախաբան

Հայ աստղագիտության նվիրյալներից է ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Էլմա Պարսամյանը, ով տասնամյակներ շարունակ իր անմնացորդ ավանդն է ներդնում Բյուրականի աստղադիտարանի համաշխարհային հեղինակությանն ու վարկանիշին: Բազմաթիվ գիտական արդյունքներ ու նվաճումներ, հարյուրավոր գիտական և գիտա-հանրամատչելի հոդվածներ, գրքեր, տասնյակ գիտաժողովներ, հրավիրված զեկուցումներ ու սեմինարներ,

տասնյակ աշակերտներ, խմբագրական և վարչական-կազմակերպչական աշխատանք, հեռուստա- և ռադիո հաղորդումներ, հրապարակումներ մամուլում, հանդիպումներ, լայնածավալ հասարակական գործունեություն . այս ամենը էլ մա Պարսամյանի գործունեության ոլորտների թվարկումն է միայն: Եթե հաշվի առնենք, որ այս ամենն իրականացվել է գիտության և ընդհանրապես հասարակության մեջ կնոջ սահմանափակ գործունեության տարիներին, ապա ավելի է կարևորվում պրոֆեսոր Պարսամյանի ներդրումը հայ գիտության մեջ:

Բյուրականի աստղադիտարանը մեր ազգի այցեքարտն է, և դրա մեջ ամենամեծ ավանդն ունեն հենց մարդիկ՝ մեր աստղագետները, առաջին հերթին Համբարձումյանը և նրա անմիջական աշակերտները, այդ թվում՝ պրոֆեսոր Պարսամյանը: Էլ մա Պարսամյանը միշտ նշում է մեր մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանի հետ իր առաջին հանդիպումների և հետագա երկարամյա աշխատանքի մասին, հպարտանում է, որ նման մեծ գիտնականի հետ է անցել կյանքի լավագույն տարիները: Հետագայում, արդեն Համբարձումյանի մահից հետո, Պարսամյանն ավարտեց ու հրապարակեց մեծ գիտնականին նվիրված գիրքը, որտեղ տեղ են գտել բազմաթիվ գիտնականների և այլ ժամանակակիցների հիշողություններն ու կարծիքները: Այդ գիրքն այժմ էլ պահպանում է իր արդիականությունը, քանի որ Համբարձումյանի գիտական ժառանգությունն անսպառ է և այն կարիք ունի շարունակական ուսումնասիրության:

Խոսելով Պարսամյանի գիտական ժառանգության մասին, առաջին հերթին պետք է նշել նրա աշխատանքները՝ ուղղված աստղերի և միգամածությունների ֆիզիկային, փոփոխական աստղերին և աստղային համակարգերի ուսումնասիրությանը, ինչպես նաև աստղաֆիզիկական կարևոր արդյունքների բերած մի շարք վիճակագրական աշխատանքները: Պարսամյանի անունով են կոչվում նրա կողմից հայտնաբերված գիսավորաձև

միգամածությունները՝ Parsamian 1, Parsamian 2 և այլն (հատկապես հայտնի է Parsamian 21-ը): Սակայն չի կարելի չնշել նրա չափազանց կարևոր աշխատանքները Հայաստանի աստղագիտական ժառանգության վերհանման, ուսումնասիրության, պարզաբանման և տարածման բնագավառում: Մասնավորապես, հայ հնագույն մտքի արգասիք հանդիսացող Մեծամորի աստղագիտական հարթակն ու Ջորաց քարերի հուշարձանը հանրությանը մատուցվեցին Պարսամյանի աշխատանքների շնորհիվ: Հետագայում, այդ հուշարձաններին անդրադարձան նաև մի շարք այլ հեղինակներ, ինչպես հնագետներ, այնպես էլ այլ մասնագետներ:

Պարսամյանի գիտական գործունեությունը բազմիցս լուսաբանվել է հանրապետական և նախկին միութենական մամուլում, ներկայացվել է հեռուստա- և ռադիո հաղորդումներում: Նրա մասին 1978թ. «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանվել է «Մոտիկ աստղեր» վավերագրական ֆիլմը ռուսերեն լեզվով, ուր կան նաև շատ արժեքավոր կադրեր Բյուրականի աստղադիտարանի կյանքից:

Գրքույկը նվիրված է պրոֆեսոր Էլմա Պարսամյանի կյանքին ու գործունեությանը՝ երիտասարդ տարիներից մինչև համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականի պատվին արժանանալը: Այն նախատեսված է ընթերցողների լայն զանգվածների համար՝ դպրոցականներից մինչև գիտնականներ, իսկ ամենակարևորը՝ ուսանելի ուղեցույց է նպատակապես և հետևողական աշխատանքով գիտության բարձունքներին հասնելու համար:

Արեգ Միքայելյան

Բովանդակություն

Նախաբան.....	3-6
Էլմա Ս. Պարսամյան. Համառոտ կենսագրություն և գիտամանկավարժական գործունեություն	8-15
Կենսագրական տվյալներ Կրթություն.....	16
Պաշտոններ / մանկավարժական գործունեություն.....	16-17
Գիտական հիմնական ուղղություններ.....	17
Ղեկավարած ատենախոսություններ.....	17
Անդամություն.....	17-18
Պարգևներ.....	18
Լուսանկարներ.....	19-29
Գիտական հրատարակումներ.....	30-46
Գիտահանրամատչելի հոդվածներ.....	47-48

Էլմա Ս. Պարսամյան

Համառոտ կենսագրություն և գիտամանկավարժական գործունեություն

Աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի հայ ուսանողների առաջին սերնդից շատերն են հասել մեծ հաջողությունների, ընտրվել Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ), միջազգային գիտական կազմակերպությունների անդամ: Նրանցից մի քանիսի հայտնաբերած ու հետազոտած օբյեկտները համաշխարհային գիտական գրականության մեջ կոչվում են իրենց անունով: Սակայն նրանց թվում քիչ են կանաչք, իսկ նշված բոլոր հաջողություններին հասել է այդ կանանցից միայն մեկը՝ ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի գլխավոր գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էլմա Պարսամյանը, ով դարձել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ֆիզիկայի բնագավառում:

Ապագա գիտնականը ծնվել է Երևանում 1929 թվականի դեկտեմբերի 23-ին պետական ծառայողի ընտանիքում: Հայրը՝ պետական գործիչ Սուրեն Մնացականի Պարսամյանը ծագումով Բյուրական գյուղից էր, իսկ մայրը՝ Բուրաստան Մուրադի Սապոնջյանը ք. Արճեշից, (Արևմտյան Հայաստան), հետագայում վաստակավոր գյուղատնտես:

Ծնողները մասնագիտությամբ գյուղատնտես էին, մասնավորապես, հայրը 1937-41 թթ. սովորել է Մոսկվայի Կ. Ա. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում: Հոր հետ Մոսկվա էր տեղափոխվել նաև Է. Պարսամյանը և 1938-41թթ. սովորել Մոսկվայի թիվ 213 դպրոցում: 1941թ. հայրը ավարտելով ակադեմիան, ընտանիքի հետ վերադարձավ Երևան, որտեղ Է. Պարսամյանը շարունակեց ուսումը Մոավյանի անվան դպրոցում,

իսկ 1946թ.-ից Մայակովսկու անվան դպրոցում, որն ավարտեց 1948թ. ոսկե մեդալով:

Հենց դպրոցական տարիներին նա հրապուրվել է աստղագիտությամբ և որոշել դառնալ աստղագետ: Այդ գործում մեծ է եղել նաև մորեղբոր՝ հետազայում ՀԳԱԱ թղթակից անդամ Օ. Մ. Սապոնջյանի դերը:

1946թ. դեռևս դպրոցական է. Պարսամյանը առաջին անգամ հանդիպել է Վիկտոր Համբարձումյանին, որը նրան դեռ այն ժամանակ խորհուրդ է տվել աստղագետ դառնալու համար լավ սովորել մաթեմատիկա և անգլերեն:

1949-1954 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի աստղագիտական բաժնում: Ավարտելուց հետո է. Պարսամյանը աշխատանքի ընդունվեց Բյուրականի աստղադիտարանում, որտեղ աշխատում է ավելի քան վեց տասնամյակ, տպագրելով մոտ 150 գիտական և մի քանի տասնյակ գիտա-հանրամատչելի հոդվածներ, որոնք վերաբերում են գլխավորապես աստղաֆիզիկայի, ինչպես նաև հնագույն աստղագիտության տարբեր խնդիրներին:

Աշխատանքային առաջին երեք տարիների ընթացքում, ջրածնի և հելիումի քանակությունների հարաբերության որոշման նպատակով, նեբուլյար սպեկտրոգրաֆի օգնությամբ, ուսումնասիրել է Օրիոնի միգամածության տիրույթը: Ստացված արդյունքները ոգևորիչ էին և խթան հանդիսացան, որպեսզի 1957թ. է. Պարսամյանը ընդունվի ասպիրանտուրա (գիտական ղեկավար՝ Գ. Ա. Գուրգադյան), որտեղ նա շարունակեց իր աստղագիտական կրթությունը, սովորելու ընթացքում հանձնելով մինիմումի քննություններ «Գազային միգամածությունների տեսություն», «Ատոմական սպեկտրների տեսություն», «Ընդհանուր աստղաֆիզիկա» առարկաներից: Որպես գիտական թեմա հաստատվեց գիսավորածև միգամածությունների գունաչափական և բևեռաչափական ուսումնասիրությունները:

Բնականաբար, գիտական գործունեության առաջին փուլում նրա հետաքրքրություններն ավելի շատ կապված էին գազային միգամածությունների, մասնավորապես գիսավորածև և մոլորակածև միգամածությունների և նրանց միջուկների, մանրակրկիտ ֆիզիկական հետազոտությունների հետ: Դիտողական նյութը հիմնականում ստացվում էր Բյուրականի աստղադիտարանի 21" Շմիդտի և Աբասումանի աստղադիտարանի 70սմ Մաքսուտովի տիպի աստղադիտակի օգնությամբ: Առաջին անգամ կատարվեցին այնպիսի օբյեկտների գունաչափական և բևեռաչափական մանրակրկիտ ուսումնասիրություններ, ինչպիսին են NGC 2261, NGC 2245, NGC 2247, Anon 6h04m և այլն:

Հատկապես հետաքրքրական էր նրա ստացած առնչությունը գիսավորածև միգամածությունների ինտեգրալ լուսատվության և դրանց հետ կապված աստղի պայծառության միջև: Հենց այդ թեմայով էլ նա 1963թ. Երևանի պետական համալսարանում պաշտպանեց իր թեկնածուականատենախոսությունը՝ «Գիսավորածև միգամածությունների գունաչափություն և բևեռաչափական հետազոտություններ» աշխատանքը:

Հետագայում գիտնականը հայտնաբերեց ավելի քան չորս տասնյակ նոր գիսավորածև միգամածություններ, կազմեց դրանց առաջին կատալոգը և կատարեց դրանց նոր դասակարգում: Այդ միգամածությունների մի մասն այսօր էլ կոչվում են Պարսամյանի անունով: Բացի գիսավորածև միգամածություններից, Է. Պարսամյանը Մ. Ղազարյանի հետ հայտնաբերել է նաև 8 նոր մոլորակածև միգամածություններ, որոնցից KjPո8-ը (Ղազարյան-Պարսամյան 8) մեծ հետաքրքրություն ներկայացնող եզակի օբյեկտ է: Կատարվել է նաև այդ օբյեկտների մանարամասն սպեկտրալ ուսումնասիրություն:

Աստղաֆիզիկական հետազոտությունների երկրորդ փուլը կապված է փոփոխական, առաջին հերթին, բնկվող աստղերի ուսումնասիրությունների հետ: Է. Պարսամյանն ակտիվորեն մասնակցել է բնկվող աստղերի դիտումներին, հայտնաբերելով ավելի քան 100 բնկվող աստղ և 200-ից ավելի բնկում Բագումքի, Օրիոնի և NGC 7023-ի բնկվող աստղերի համակարգերում: Օգտագործելով առկա տվյալները Է. Պարսամյանը մի շարք կարևոր արդյունքներ է ստացել: Հատկապես պետք է նշել բնկվող աստղերի տարիքի որոշման՝ նրա կողմից մշակված մեթոդը:

Ընդհանրապես աստղաֆիզիկայում կարևոր խնդիրներից մեկը տիեզերական մարմինների տարիքի որոշումն է: Պետք է նշել, որ Վիկտոր Համբարձումյանին հաջողվել էր ցույց տալ, որ ցածր լուսատվության ու փոքր զանգվածով բոլոր կարմիր աստղերն իրենց երիտասարդության ընթացքում անպայման անցնում են բնկումային փուլով: Մակայն խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ էր, հնարավորության դեպքում, գտնել բնկումային ակտիվության ու տարիքի կապը:

Պարսամյանին հաջողվել է էական ներդրում կատարել այս բնագավառում, մշակելով մի մեթոդ, որը թույլ է տալիս աստղասփյուռի կամ աստղակույտի տարիքը որոշել, օգտագործելով այդ համակարգերում առկա բնկվող աստղերի բնկումային ակտիվությունը: Ավելին, նոր բանաձև է ստացվել նաև Արեգակի շրջակայքի բնկվող առանձին աստղերի տարիքը որոշելու համար: Այդ աշխատանքը բարձր գնահատական ստացավ Համբարձումյանի կողմից որպես աստղակույտերի և աստղերի տարիքները գնահատելու այլընտրանքային մեթոդ:

Այս նույն բնագավառում մեքսիկացի հայտնի աստղագետ Գիյերմո Հարոյի հետ բնկումների պարբերական/ցիկլային բնույթի մասին կանխագուշակումը նույնպես կարևոր էր, ինչը հետագայում ապացուցվեց Պարսամյանի և մեքսիկացի աստղագետների համատեղ աշխատանքներում:

Նշանակալից արդյունքներ են ստացվել նաև դանդաղ բոկումների ուսումնասիրության բնագավառում: Է. Պարսամյանը՝ վերլուծելով այդ բռնկումների կորերը, կատարեց դրանց դասակարգում, ստացավ առնչություններ բռնկման մաքսիմումում աստղի լուսատվության և բռնկման ժամանակ պայծառության աճի/մարման արագությունների միջև: Դա իր հերթին թույլ տվեց որոշակի պատկերացում կազմել, թե ինչպիսի խորությունների վրա են տեղի ունենում դանդաղ բռնկումները:

Բռնկվող աստղերի հետազոտությունները 1983թ. հիմք դարձան Է. Պարսամյանի «Բռնկվող աստղերը աստղային ազդեցատներում» դոկտորական ատենախոսության համար: Դոկտորական ատենախոսության համար դիտողական նյութը ստացվել էր անձամբ հեղինակի կողմից Բյուրականի աստղադիտարանի 40 դյույմանոց Շմիդտի տիպի աստղադիտակով:

Աստղային փոփոխությունների ուսումնասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն Է. Պարսամյանի աշխատանքները, որոնք նվիրված են սուբֆուորների (EXor) հետազոտություններին: Այս փոփոխականները պատկանում են անհամեմատ սակավաթիվ և միաժամանակ առավել հանելուկային օբյեկտների թվին, որոնց ֆիզիկական բնույթի պարզաբանումը դեռևս մնում է որպես ապագայի գործ: 1980-ական թվականներից սկսած Է. Պարսամյանը իր մեքսիկացի և իսպանացի կոլեգաների հետ, իր ղեկավարությամբ, միասին ինտենսիվորեն ուսումնասիրել են Օրիոնի համաստեղության մեջ գտնվող V1118 Ori և V1143 Ori սուբֆուորները: Այդ օբյեկտների մոնիտորինգի արդյունքում իրենց կողմից գրանցվել է 7 բռնկում, ստացվել են դրանց պայծառության կորերը բռնկման ողջ ընթացքում: Ցույց է տրվել, որ պայծառության փոփոխման մաքսիմալ ամպլիտուդները էականորեն չեն փոխվում: Կատարվել են նաև այդ օբյեկտների սպեկտրային ուսումնասիրություններ: Հատկապես պետք է նշել իոնացված

կայցիումի ինֆրակարմիր տրիպլետի վարքի համեմատական ուսումնասիրությունը մինչ բռնկումը և բռնկման ընթացքում: Նկատվել է նաև, որ միջբռնկումային ժամանակահատվածներում նրանց սպեկտրները նման են թույլ T Tau տիպի (WTTS), իսկ բռնկման ընթացքում՝ դասական (CTTS) T Tau տիպի աստղերի սպեկտրներին:

Չնայած աստղաֆիզիկական հետազոտությունների բավականին մեծ քանակին և դրանցով զբաղվածությանը, Է. Պարսամյանը 1966թ. ի վեր բավականին կարևոր աշխատանքներ է կատարել նաև Հայաստանի տարածքում հին աստղագիտական գիտելիքների մակարդակի վերհանման ուղղությամբ: Այդ աշխատանքներից առավել հայտնի են Մեծամորում դիտողական հարթակների հետազոտությունները: Մեծամորը իր տեսակի մեջ եզակի օբյեկտ է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային արքեոաստղագիտության մեջ: Կատարելով անհրաժեշտ չափումները և օգտագործելով սֆերիկ աստղագիտության մեթոդները Է. Պարսամյանը հնարամտորեն լուծեց խնդիրը՝ որոշեց թե ո՞ր պայծառ աստղերն են երբևէ ծագել հորիզոնի այն կետում, որի հետ հատվում է այն հարթակի միջին գծի երևակայական շարունակությունը, որտեղ չորս անգամ պատկերված է աստղի նշանը: Դա էր Մեծամորի փոքր բլրի առեղծվածի հանգուցալուծումը:

Է. Պարսամյանի կողմից կատարված հաշվումները թույլ տվեցին հաստատել, որ մ.թ.ա. 2800-2600 թթ. Մեծամորի բնակիչները դիտել են Սիրիուսը: Այդ ժամանակ ամառային արևադարձի օրերին Սիրիուսը կարելի էր դիտել լուսաբացին, ծագող արևի շողերում: Բացառված չէ, որ տարվա մեջ Սիրիուսի առաջին անգամ երևալը, մեծամորցիները եգիպտացիների նման կարող էին կապել տարվա սկզբի հետ: Այս ամենը վկայում է այն մասին, որ հայկական լեռնաշխարհի բնակիչները քաջ ծանոթ էին

աստղալից երկնքին և կարող էին լուսատուի պարբերաբար երևան օգտագործել ժամանակը հաշվելու համար:

Պետք է հիշատակել նաև, որ նա առաջինն էր, ով դեռևս 1984թ.-ից Ջորաջ քարեր մեզալիթային կառույցի հնարավոր աստղագիտական նշանակության վրա ուշադրություն հրավիրեց: Պարսամյանի կողմից այդ խնդրին անդրադառնալը պետք է համարել մեզանում այդ կարևոր, հետաքրքրական և շատ բարդ խնդրի վրա ուշադրություն հրավիրելու անհրաժեշտ փորձ:

Բեղմնավոր գիտական աշխատանքի հետ համատեղ զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ՝ դասավանդելով Երևանի պետական համալսարանում և Երևանի Խ . Աբովյանի անվ. մանկավարժական ինստիտուտում: Վերջինում զբաղեցրել է նաև «Տեսական ֆիզիկայի և Աստղագիտության» ամբիոնի վարիչի պաշտոնը: 90-ականներին Է. Պարսամյանը աշխատել և դասավանդել է Մեքսիկայի Աստղաֆիզիկայի, Օպտիկայի և Էլեկտրոնիկայի ազգային ինստիտուտում:

Է. Պարսամյանի գիտական գործունեությունը բարձր է գնահատվել գիտական հասարակության և իշխանությունների կողմից, ինչն արտահայտվել է տարբեր պատվոգրերի, մեդալների, այդ թվում՝ «Անանիա Շիրակացի» մեդալի շնորհումով: Է. Պարսամյանը մասնակցել է միջազգային 30 գիտաժողովների, որոնցից գրեթե բոլորում հանդես է եկել գիտական հաղորդումներով: Իր գիտական գործունեության ընթացքում աշխատել է Գերմանիայի, Մեքսիկայի, Հունգարիայի, Իտալիայի, Իսպանիայի, ԱՄՆ-ի տարբեր գիտական կենտրոններում: Անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը, Եվրոպական, Եվրասիական և Հայկական աստղագիտական ընկերություններին, երկար տարիներ անդամակցել է Բյուրականի աստղադիտարանի Գիտական խորհրդին, ինչպես նաև աստղադիտարանին կից գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված խորհրդին, որի նախագահն է եղել 2005-2016 թթ.,

«Աստղաֆիզիկա» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է և այլն:

Մեծ է նրա հարգանքն ու սերը իր ուսուցչի հիշատակի հանդեպ: Պատահական չէ, որ Վիկտոր Համբարձումյանի գիտական աշխատությունների երրորդ հատորի, ինչպես նաև նրա 100-ամյակին նվիրված հիշողությունների գրքի նախաձեռնողն ու կազմողն էր էլ՝ մա Պարսամյանը:

Է. Պարսամյանի հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում միայն աստղագիտությամբ: Այդ ընդգրկում է գիտության մյուս ճյուղերը, արվեստը, պատմությունը և այլն:

Նա գրականության, մասնավորապես պոեզիայի, լավ գիտակ է: Լեզուների լավ իմացության շնորհիվ նա ռուս, իսպանացի, անգլիացի և գերմանացի պոետներին կարդացել է բնագրով: Պոեզիայի նկատմամբ մեծ սիրո յուրատեսակ վկայություն է հանդիսանում իր սեփական բանաստեղծությունների փոքրիկ ընտրանին:

Է. Պարսամյանը քաջատեղյակ է նաև արվեստի մյուս բնագավառներին, մասնավորապես՝ գեղանկարչությանը: Այդ հարցում մեծ էր նրա եղբոր՝ վաստակավոր նկարիչ Ալբերտ Պարսամյանի դերը:

Կարելի է երկար շարունակել գիտնականի և՛ աշխատանքների, և՛ նվաճած բարձունքների մասին: Եվ ինչ էլ գրելու լինենք, չպետք է մոռանալ նրա մի քանի շատ կարևոր մարդկային հատկությունների մասին: Դա առաջին հերթին նրա կառուցողական մոտեցումն ու նվիրվածությունն է Հայաստանում աստղաֆիզիկայի պահպանման և զարգացման գործին:

Հայկ Հարությունյան

Կենսագրական տվյալներ

Կրթություն

- 1938-1948 թթ. – միջնակարգ դպրոց, Մոսկվա – Երևան
1949-1954թթ. – Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ)
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի ուսանող
1957-1960թթ. – Բյուրականի աստղաֆիզիկական
աստղադիտարանի (ԲԱ) ասպիրանտ
1963թ. – Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ, Հայաստան
1983թ. – Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ԲԱ,
Հայաստան
1989թ. – Պրոֆեսոր, Կրթության պետական կոմիտե, Մոսկվա

Տիրապետում է հայերեն, ռուսերեն ,անգլերեն, իսպաներեն
և մասամբ գերմաներեն լեզուներին

Պաշտոններ / մանկավարժական գործունեություն

- 1954-1956 թթ., 1961-1966 թթ. – Կրտսեր գիտաշխատող (ԲԱ)
1967-1985 թթ. – Ավագ գիտաշխատող (ԲԱ)
1967-71 թթ. – Համատեղությամբ դասավանդել է
«Աստղալուսաչափություն», Ֆիզիկա- մաթեմատիկական
ֆակուլտետ (ԵՊՀ)
1983-1987 թթ. – Համատեղությամբ Երևանի Պետական
մանկավարժական ինստիտուտի (ԵՊՄԻ),
Աստղագիտության և տեսական ֆիզիկայի ամբիոնի
վարիչ: Դասավանդել է «Ընդհանուր աստղաֆիզիկա»,
«Աստղագիտության պատմություն»
1985-2000 թթ. – Առաջատար գիտաշխատող (ԲԱ)

1989-1991 թթ. – Համատեղությամբ ԵՊՀ պրոֆեսոր, Հայաստան,
1990-1991 թթ. – դասավանդել է «Աստղագիտության
պատմություն»

1991-1996 թթ. – Համատեղությամբ Շ (Բարձրագույն) կարգի
գիտաշխատող, 1992 – դասավանդել է «Անկայուն
օբյեկտներ», «Փոփոխական աստղեր», Instituto Nacional de
Astrofísica, Óptica y Electrónica (INAOE), Մեքսիկա

2000թ.-ից – Գլխավոր գիտաշխատող (ԲԱ)

Գիտական հիմնական ուղղություններ

1. Գազային միգամածություններ
2. Փոփոխական աստղեր
3. Արքեոաստղագիտություն

Ղեկավարած ատենախոսություններ

1. *«Գիսավորածն միգամածությունների հետ կապված աստղերի
սպեկտրալ ուսումնասիրություն»*, Վ. Պետրոսյան, 1984, ԲԱ
2. «Աստղադիտական դիտումները Միջնադարյան
Հայաստանում», Ա. Բարսեղյան, 1989, Մոսկվա
3. «Աստղաչափական եւ քանակական եղանակների
կիրառութիւնը Հայոց տոմարի որոշ խնդիրներ լուծելիս», Գ.
Բրուտյան, 2005, ԲԱ

Անդամություն

1. 1976 թ. – Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ)
անդամ, հանձնաժողովները՝ «Փոփոխական աստղեր»,
«Աստղակույտեր և աստղասփյուռներ»

2. 1976-2005 թթ. – Բյուրականի աստղադիտարանում գործող գիտական աստիճաններ շնորհող Մասնագիտական խորհրդի անդամ, 2005-2016 թթ. – նույն խորհրդի նախագահը
3. 1985-1988 թթ. – Սոցիալիստական երկրների գիտությունների ակադեմիաների «Աստղերի ֆիզիկա» հանձնաժողովի «Բռնկվող աստղեր» աշխատանքային խմբի փոխնախագահ
4. 1986-1991 թթ. – Աստղագիտական կադրերի պատրաստման խորհրդի անդամ, ԽՍՀՄ
5. 1988-1992 թթ. – «Պատմա-աստղագիտական հետազոտություններ» ամենամյա ժողովածուի խմբագրության անդամ, Մոսկվա, «Նաուկա» հրատարակչություն
6. 1990 թ. – Եվրոպական աստղագիտական միության (ԵԱՄ) անդամ
7. 1990-1992 թթ. – Գլոբալ անվտանգության Խորհրդային գիտնականների կոմիտեի անդամ
8. 1990-1992 թթ. – Համալսարաններում և ինստիտուտներում աստղագիտության դասավանդման գիտական մեթոդաբանական խորհրդի անդամ, ԽՍՀՄ
9. 1996 թ. – Ռուսական աստղագիտական ընկերության անդամ
10. 2000 թ.-ից «Աստղաֆիզիկա» հանդեսի խմբագրության անդամ
11. 2000 թ.-ից Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ

Պարգևներ

Արժանացել է կառավարական պարգևների, այդ թվում .

1979թ. – «Աշխատանքային արիության համար» մեդալ, ԽՍՀՄ
 2003թ. – «Անանիա Շիրակացի» մեդալ, Հայաստանի
 Հանրապետություն



1949թ.



Վ. Ա. Սանամյան, Բ. Ե. Մարգարյան, Է. Հ. Միրզաբեկյան, Հ. Ս.
Բաղայան Է.Ս. Պարսամյան, Ա. Տ. Քալլողլյան, Գ. Ա. Գուրգադյան,
Բյուրական, 1956թ.



Վ. Վ. Սորոլև, Է. Ս. Պարսամյան, Մոսկվա, 1958թ.



Առջևում՝ Վ. Հ. Համբարձումյան, Վ. Սարոյան, Ռ. Շահբազյան, Է. Պարսամյան, Բյուրական, 1960թ.



1960թ.



Է.Ս. Պարսամյան, Բ.Բոկ, Լ.Վ. Միրզոյան, 1965թ.



**Միևարգիում,
Բյուրական, 1966թ.**



Դիտակի մուտ, 1967թ.



Պ.Սևակի հետ Մեծամորում, 1969թ.



1973թ.



Վ.Հ. Համբարձումյան, Է.Ս.Պարսամյան, Կորդորա, Արզենտինա,
1974թ.



Միմպոզիում, Բյուրական, 1979թ.



Է.Ս. Պարսամյան, Գ.Ն. Սալուկվաձե, Վ.Հ. Համբարձումյան,
Թբիլիսի, 1982թ.



1988թ.



Կոռնելի Համալսարան, ԱՄՆ, 1994թ.



Է.Ս. Պարսամյան, Պ.Փիշմիշ, Մեխիկո, 1994թ.



Ջորաց քարեր

Գիտական հրատարակումներ

1962

Колориметрия Кометарной Туманности NGC 2261. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 30, 51-65, 1962.

1963

Поляриметрия и колориметрия туманности NGC 2245. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 32, 3-15, 1963.

Поляриметрия и колориметрия туманности NGC 2247. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 32, 17-24, 1963.

Колориметрическое и поляриметрическое исследование некоторых кометарных туманностей. Э. С. Парсамян. Кандидатская Диссертация, 1-105, 1963, Ереван.

Колориметрия и поляриметрия некоторых кометарных туманностей. Э. С. Парсамян. Автореферат кандидатской диссертации, Ереван, 1-10, 1963.

1964

Новое измерение поляризации излучения NGC 2261. Э. Е. Хачикян, Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 35, 71-73, 1964

1965

Список кометарных туманностей, обнаруженных на Паломарских картах. Э. С. Парсамян, Известия АН Арм. ССР, XVIII, N2, 146-148, 1965.

Колориметрическое исследование кометарной туманности Առոք 6h 04m. Э. Е. Хачикян, Э. С. Парсамян. Астрофизика, 1, 417-428, 1965.

О переменности некоторых звезд в области Ориона. Л. В. Мирзоян, Э. С. Парсамян. Переменные Звезды, 15, 470-473, 1965.

1966

Поляризация света туманности IC 446. Э. С. Парсамян, Астрофизика, 2, 369-371, 1966.

1967

Три новые вспыхивающие звезды в области туманности NGC 7023. Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, Астрономич. Циркуляр, N 399, 3-5, 1967.

Колориметрия ядер галактик NGC 3310 и 3351. Э. С. Парсамян. Астрофизика, 3, 529-534, 1967

Ancient Armenian Observatory. E. S. Parsamian, K. A. Mkrtchian, Sky and Telescope, November, 1967.

1968

Три новые вспыхивающие звезды в области NGC 7023. Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, О. С. Чавушян. Сообщ. Бюракан.Обс., 39, 3-9, 1968.

Колориметрическое исследование туманности IC 446. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан.Обс. 39, 10-18, 1968.

Flare stars near NGC 7023. L. V. Mirzoyan, E. S. Parsamian, Non Periodic Phenomena in Var. Stars. IAU Colloq. N4, Budapest, 165-167, 1968.

Новые вспыхивающие звезды. Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, Н. Л. Каллоглян. Астроном. Циркуляр АН СССР, N 485-487, 7, 1968.

О классификации ядер некоторых эллиптических галактик. Э. С. Парсамян. *Астрофизика*, 4, 150-152, 1968.

Древние каменные сооружения в Мецаморе. Э. С. Парсамян. «Земля и Вселенная», АН СССР, 311, 1968.

1969

Новые вспыхивающие звезды в NGC 7023 II. Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, Н. Л. Каллоглян. *Сообщ. Бюракан.Обс.*, 40, 31-34, 1969.

New Flare Stars in the Pleiades. E. Parsamian, E. Chavira. *Bol. Obs. Tonantzintla y Tacubaya*, V.5, 31, 35-40, 1969.

НП 2411- A Hyades Flare Star. G. Haro, E. Parsamian. *Bol. Obs. Tonantzintla y Tacubaya*, V.5, 31, 41-44, 1969.

A New "Slow" Flare Star in Orion. G. Haro, E. Parsamian. *Bol. Obs. Tonantzintla y Tacubaya*, v. 5, 31, 45-53, 1969.

Об одной новой переменной в области NGC 7023. Э. С. Парсамян. *Астрономический Циркуляр АН СССР*, N 524, 8, 1969 .

Две замечательные вспыхивающие звезды в Плеядах. Э. С. Парсамян, О. С. Чавушян. *Астрофизика*, 5, 499-502, 1969.

О возможном астрономическом назначении одной из площадок, обнаруженных в Мецаморе (Армения). Э. С. Парсамян, К. А. Мкртчян. *Историко-Астрономические Исследования*, т. X, 35-40, Москва, 1969.

1970

Вспыхивающие звезды в Плеядах. В. А. Амбарцумян, Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, О. С. Чавушян, Л. К. Ерастова. *Астрофизика*, 6, 7-30, 1970.

1971

Новые вспыхивающие звезды в области NGC 7023. Э. С. Парсамян, И. Янкович. Сообщ. Бюракан. Обс., 43, 3-5, 1971.

Вспыхивающие звезды в Плеядах, П. В. А. Амбарцумян, Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, О. С. Чавушян, Л. К. Ерастова. Астрофизика, 7, 319-331, 1971.

О частоте вспышек звезды Наго 18 в Плеядах. Э. С. Парсамян. Астрофизика, 7, 507-509, 1971.

Медленная вспышка в Плеядах. Э. С. Парсамян. Астрофизика, 7, 547-555, 1971.

Новые эмиссионные H α звезды вокруг у Лебеда. М. А. Казарян, Э. С. Парсамян. Астрофизика, 7, 671-673, 1971.

Новые эмиссионные звезды в области NGC 6729. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 43, 6-8, 1971.

Новые планетарные туманности. М. А. Казарян, Э. С. Парсамян. Астрономический Циркуляр АН СССР, N602, 6-8, 1971.

1972

Новые вспыхивающие звезды в Плеядах. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. Обс., 44, 3-13, 1972.

Двухцветные наблюдения вспышки звезды N 207 в Плеядах. Э. С. Парсамян, О. С. Чавушян. Сообщ. Бюракан. Обс., 44, 17-20, 1972.

Наблюдения спектра вспышки звезды 205 в Плеядах. Э. С. Парсамян. Сообщ. Бюракан. Обс., 44, 14-16, 1972.

Вспыхивающие звезды в Плеядах. III. В. А. Амбарцумян, Л. В. Мирзоян, Э. С. Парсямян, О. С. Чавушян, Л. К. Ерастова, Э. С. Казарян, Г. Б. Оганян. *Астрофизика*, 8, 485-508, 1972.

1973

Вспыхивающие звезды в Плеядах. IV. В. А. Амбарцумян, Л. В. Мирзоян, Э. С. Парсямян, О. С. Чавушян, Л. К. Ерастова, Э. С. Казарян, Г. Б. Оганян, И. И. Янкович. *Астрофизика*, 9, 461-478, 1973.

Астрономическое значение малого холма в Мецаморе, Э. С. Парсямян. Монография "Мецамор", гл. IV., 142-152, Изд. АН Арм. ССР, Ереван, 1973.

1974

Спектральные наблюдения некоторых кометарных туманностей. М. Мендес, Э. С. Парсямян. *Астрофизика*, 10, 65-71, 1974.

1975

Новые вспыхивающие звезды в Плеядах. II. Э. С. Парсямян. *Сообщ. Бюракан. Обс.*, 46, 3-15, 1975.

Двухцветные наблюдения вспыхивающих звезд в Плеядах. Э. С. Парсямян, О. С. Чавушян. *Сообщ. Бюракан. Обс.*, 46, 16-22, 1975.

1976

Новые вспыхивающие звезды в Плеядах. III. Э. С. Парсямян. *Сообщ. Бюракан. Обс.*, 49, 8-12, 1976.

Зависимость абсолютных величин (энергий) вспышек от возраста скоплений, в которое входят вспыхивающие звезды. Э. С. Парсямян. *Астрофизика*, 12, 235-244, 1976.

1977

О возможности определения возраста агрегатов по наблюдениям вспыхивающих звезд, Э. С. Парсамян. Труды Симпозиума “Вспыхивающие Звезды”, Ереван, 87-93, 1977.

Determination of the Age of Clusters by observations of Flare Stars. E. S. Parsamian. Star Cluster Symposium, ed. B. Balazs, Budapest, 119-127, 1977.

1978

Колориметрия кометарной туманности Парсамян 21. Э. С. Парсамян, В. М. Петросян. Астрофизика, 14, 521-524, 1978.

Flare Stars in the Orion Nebula Region. E. S. Parsamian, E. Chavira, G. Gonzalez. Bol. Inst. Tonantzintla, 2, 341-343, 1978.

1979

Каталог кометарных туманностей и родственных объектов. Э. С. Парсамян, В. М. Петросян. Сообщ. Бюракан. Обс., LI, 3-15, 1979.

1980

Кометарные туманности, Труды Симпозиума “Вспыхивающие Звезды, Фуоры и Объекты Хербига-Аро”, Э. С. Парсамян. 259-269, Ереван, 1980 .

Исследование Кометарной Туманности P21 (Парсамян 21). Труды Симпозиума “Вспыхивающие Звезды, Фуоры и Объекты Хербига-Аро”, Э. С. Парсамян, В. М. Петросян. 281-284, Ереван, 1980.

Медленные вспышки в агрегатах. I. Э. С. Парсамян. Астрофизика, 16, 87-96, 1980.

Медленные вспышки в агрегатах, П. Э. С. Парсамян. *Астрофизика*, 16, 231-241, 1980.

Функция распределения частоты вспышек в Орионе. Э. С. Парсамян. *Астрофизика*, 16, 677-685, 1980.

Flare Stars in Evolved Clusters. E. S. Parsamian. *Star Clusters*. J. E. Hesser (ed.), IAU Symp. 85, 249-250, Victoria, Canada, 1980.

1981

О количестве звезд с H α эмиссией в области туманности Ориона. Э. С. Парсамян. *Астрофизика*, 17, 579-583, 1981.

1982

Вспыхивающие звезды в звездных агрегатах Э. С. Парсамян. Докторская Диссертация, 1-450, Ереван, 1982.

Вспыхивающие Звезды в Звездных Агрегатах. Э. С. Парсамян. Автореферат диссертации на соискание ученой степени доктора физико-математических наук. 1-20, Ереван, 1982.

Catalog of H α Emission Stars in the Region of the Orion Nebula. E. S. Parsamian, E. Chavira. *Bol. Inst. Tonantzintla* 3, 69-96, 1982.

Малый Мецаморский холм-древнейший комплекс наблюдательных площадок в Армении. Э. С. Парсамян. Всесоюзный симпозиум "Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа", 120-125, Ереван, 1982.

1983

Эруптивная звезда в Тельце. Э. С. Парсамян, Г. Б. Оганян, Э. С. Казарян, И. Янкович. *Астрономич. Циркуляр АН СССР*, N1269, 1983.

1984

Колориметрия диффузных туманностей S156, S157A, S158, NGC 7536. Э. С. Парсамян, В. М. Петросян. *Астрофизика*, 20, 495-502, 1984.

New Flare Stars in the Region of the Association Mon I. E. S. Parsamian, L. Rosino, O. S. Chavushian. *Inform. Bull. Var. Stars*, N2620, 1-2, Konkoly, Hungary, 1984.

1985

Об астрономическом значении малого мецаморского холма. Э. С. Парсамян. *Сообщ. Бюракан. Обс.*, 57, 92-100, 1985

Характер фотометрических кривых вспыхивающих звезд на основе фотографических наблюдений. Э. С. Парсамян. *Сообщ. Бюракан. Обс.*, 57, 79-84, 1985.

О возможном астрономическом назначении мегалитических колец Ангелакота. Э. С. Парсамян. *Сообщ. Бюракан. Обс.*, 57, 101-103, 1985.

Вспыхивающие и H α в эмиссии звезды в области ассоциации Ориона. Э. С. Парсамян. *Астрофизика*, 22, 87-96, 1985.

Новые вспыхивающие звезды в области ассоциации Единорог 1. Э. С. Парсамян, Л. Розино, О. С. Чавушян, *Астрофизика*, 22, 315-324, 1985.

К вопросу о двойственности вспыхивающих звезд. Э. С. Парсамян, *Астрофизика*, 22, 633-635, 1985.

Новые эмиссионные H α звезды в области темных облаков Тельца. Э. С. Парсамян, А. С. Ходжаев. *Астрофизика*, 23, 203-206, 1985.

Flare Stars in Stellar Associations and Clusters and Their Place in Star Evolution. E. S. Parsamian. III-rd Latin American Astronomical Conference in Buenos Aires. Rev. Mexicana de Astron. y Astroph., 10, 221-228, 1985.

1986

Новые вспыхивающие звезды в области ассоциации. Единорог 1. Э. С. Парсамян, Л. Розино, О. С. Чавушян. Труды Симпозиума “Вспыхивающие звезды и родственные объекты”, 79-83, Бюракан, 1986.

Пекулярные звезды в области ассоциации Ориона. Э. С. Парсамян, Г. А. Погосян, Труды Симпозиума “Вспыхивающие звезды и родственные объекты”, 130-134, Бюракан, 1986.

О характере переменности TZ Ориона. Э. С. Парсамян, Г. А. Погосян. Астрофизика, 24, 239-244, 1986.

H-R Diagram for the Flare Stars in the Pleiades. E. S. Parsamian. Star Cluster and Associations Symposium, Budapest, 115-122, 1986.

New Flare Stars in the Region of Mon1 Association. E. S. Parsamian, L. Rosino, O. S. Chavushian. Star Cluster and Associations Symposium, Budapest, 123-127, 1986.

Древняя астрономия в Армении. Э. С. Парсамян. Природа, СССР, 27-36, 1986

1987

Золотая медаль Ломоносова мексиканскому ученому (Г. Аро). Э.С.Парсамян. Историко-Астрономич. Исследования, 341-343, т. XIX, Москва, 1987.

О фуорообразных изменениях блеска звезд ассоциации Ориона. Э. С. Парсамян, К. Г. Гаспарян. Астрофизика, 27, 447-458, 1987.

Archeo-Astronomie en Armenie. E. S. Parsamian. L'Astronomie, Fevrier, 1987, 97-104, France

New Brightening of Sugano's Object in Orion Association. E. S. Parsamian, K. A. Gasparian, G. B. Oganian. Inform. Bull. Var. Stars N 3024, Konkoly, Hungary, 1987.

Загадка Зорац Кара. Э. С. Парсамян, А. Ж. Барсемян. Некоторые Вопросы Экспериментальной Физики и Методики Преподавания в Вузе и в Школе, Арм. Гос. Пед. институт, 20, 68-71, 1987.

1988

Археoaстрономия в Армении. Э. С. Парсамян. Историко-Астрономические Исследования. т. XX, 137-146, Москва, 1988.

GM-1-11 – новая планетарная туманность? К. Г. Гаспарян, Э. С. Парсамян. Астрофизика, 28, 679-682, 1988.

В. А. Амбарцумян, Научные Труды, том. 3, 1988. Ереван. Составитель Э. С. Парсамян, ред. В. В. Соболев, 371с.

1989

Спектральные наблюдения звезд связанных с туманностями, Э. С. Парсамян, В. М. Петросян, Сообщ. Бюраканской обс., 104-112, 1989.

Парсамян, Э. С. , Оганян, Г. Б. Диаграмма спектр-светимость для вспыхивающих звезд скопления Плеяды. Астрофизика, 30, 220-223, 1989.

1990

Переменность эмиссионной линии $H\alpha$ звезд ассоциации Ориона. Э. С. Парсамян, Сообщ. Бюракан. обс., 63, 11-25, 1990.

Наблюдения новых и сверхновых звезд в средневековой Армении. Э. С. Парсамян, А. Ж. Барсегян, Сообщ. Бюракан. обс., 63, 92-97, 1990.

Slow Flares in Stellar Aggregates and Solar Vicinity E. S. Parsamian, G. B. Oganian. Flare Stars in Star Clusters, Associations and Solar Vicinity, IAU Symp. N137, Byurakan, 109-112, 1990.

Subfuors in Orion Association. K. G. Gasparian, A. S. Melkonian, G. B. Oganian, E. S. Parsamian. Flare Stars in Star Clusters, Associations and Solar Vicinity, IAU Symp. N137, Byurakan, 253-256, 1990.

Flare Star T 176. E. S. Parsamian, E. Chavira. Inform. Bull. Var. Stars N3498, Konkoly, Hungary, 1990.

Медленные вспышки в заездных агрегатах. III. Парсамян Э. С., Оганян Г. Б., Астрофизика, 33, 243-250, 1990.

Fuorlike Variables in Orion Associaton. K. G. Gasparian, A. S. Melkonian, G. B. Oganian, E. S. Parsamian. "Star Clusters and Association" Symposium Ed. by B. A. Balazs. Publ. Astron. Dep. Eotvos Univ. N.10, 167-173, Budapest 1990

Archaeoastronomical Investigations in Armenia. E. S. Parsamian. Interdiscip. Investig., v.XVII, 125-130, Sofia, 1990.

1991

On Variability of TZ Ori. E. S. Parsamian, A. S. Melkonian, K. G. Gasparian, G. B. Oganian. Surface Inhomogeneity in Late-Type Stars, Proceed. of a Colloq. held at Armagh Obs. N. Ireland, 1990, eds. P. B. Bearne and D. J. Mullan, 325-326, 1991.

New flare stars and repetitions in the Orion association region, E.S. Parsamian, E. Chavira. Rev. Mexicana de Astr. Astrof. 22, 15-17, 1991.

TZ Ori – звезда типа RR Lyr? Парсамян Э. С., Мелконян А. С., Гаспарян К. Г., Оганян, Г. Б.. *Астрофизика*, 34 (3), 345-350, 1991.

Спектральные наблюдения субфуора V 1143 Ori (1985-1988), Пеймберт М. , Парсамян Э. С., Гаспарян К. Г., Мелконян А. С., Оганян Г. Б., *Астрофизика*, 35 (2-3), 181-196, 1991.

Periodicities in the Flare Star III 2411. O. Cardona, E. Chavira, E.S. Parsamian. *Rev. Mexicana Astron. Astrof.*, 22, 213-215, 1991.

Характер переменности субфуора V 1143 Ori, Парсамян Э. С. , Гаспарян К. Г., Оганян Г. Б., Чавира Э., *Астрофизика*, 34 (2), 175-180, 1991.

1992

Variation of Subfuor VII43Ori. E. S. Parsamian, K.G. Gasparian, G. B. Oganian. *Astr. Astroph. Transactions*, v. 2, 209-211, 1992.

История астрономии в Армении, Б. Е. Туманян, Э. С. Парсамян, История отечественной астрономии, Киев, Наукова Думка, 119-144, 1992.

A Spectroscopic Observation of Subfuor V1143 Ori in 1989. E. S. Parsamian, K. G. Gasparian. *Sov. Astronomy Letters*, 18, 247-249, 1992.

The Photometric Behavior of the Subfuor V1118 Ori. E. S. Parsamian, M. A. Ibragimov, G. B. Ohanian, K. G. Gasparian. *Sov. Astronomy Letters*, 18, 248, 1992.

New Flare Stars and Repetitions in the Orion Association Region. E. Chavira, G. Gonzalez, C. Escamilla, E. Parsamian. *Inform. Bull. Var. Stars*, N3764, 1-5, Konkoly, Hungary, 1992.

Flare Stars in the Praesepe Cluster Region. G. Gonzalez, C. Escamilla, E. Parsamian. *Inform. Bull. Var. Stars*, No. 3794, Konkoly, Hungary, 1992.

1993

Фотометрия субфлуора V1118 Ori (1988-1990), Парсамян Э. С., Ибрагимов М. А., Оганян Г. Б., Гаспарян К. Г., *Астрофизика*, 36 (1). 23-34, 1993.

New Flare Stars and Repetitions in the Orion Association Region. II. E. Parsamian, E. Chavira, G. Gonzalez, C. Escamilla. *Rev. Mexicana Astron. Astrof.* 25, 71-73, 1993.

Спектральная классификация вспыхивающих звезд скопления Плеяды, Парсамян Э. С., Оганян Г. Б., *Астрофизика*, 36 (4), 501-516, 1993.

Eminente Astronomo Mexicano (Guillermo Haro). 21. Sep., 1993, "Sol", "Tribuna", "Excelcior", Mexico, (esp.)

1994

New Flare Stars in Cygnus T1 Association Region. Elma S. Parsamian, Enrique Chavira, Graciela Gonzalez. *Inform. Bull. Var. Stars*, N 4046, 1-2, Konkoly, Hungary, 1994.

New Flare Stars in the Region of Ophiuchus and Scorpius. Elma S. Parsamian, Enrique Chavira, Graciela Gonzalez. *Inform. Bull. Var. Stars*, N 4047, Konkoly, Hungary, 1994.

The Extragalactic Nature of PP31. Elma S. Parsamian, Jose Guichard and Raul Mujica. *Mon. Not. R. Astron. Soc.* 270, 893-896, 1994.

Ancient Astronomy in Armenia. Elma Parsamian. *Pan-Armenian Science Review*, v.1, N2, 12-21, London, 1994.

1995

On the Age of Flare Star FS2 and the cluster a Persei. Elma S. Parsamian. *Inform. Bull. Var. Stars*, N 4162, Konkoly, Hungary, 1995.

New outburst of V1118 Ori. Jose Garcia Garcia, Antonio Mampaso and Elma Parsamian, Inform.Bull. Var. Stars, N 4268, Konkoly, Hungary, 1995.

New outburst of V1143 Ori. Antonio Mampaso and Elma Parsamian, Inform.Bull. Var. Stars, N 4269, Konkoly, Hungary, 1995

Определение возраста звездных агрегатов и вспыхивающих звезд галактического поля, Парсамян Э. С., *Астрофизика*, 38 (3), 369-380, 1995.

1996

Спектральные наблюдения Парсамян 21, Парсамян Э. С., Гаспарян К. Г., Оганян, Г. Б. *Астрофизика*, 39 (2), 225-232, 1996.

Спектральные наблюдения V1118 Ori в 1989 г., Парсамян Э. С., Гаспарян К. Г., Оганян Г. Б., Мелконян, А. С., *Астрофизика*, 39 (3), 365-374, 1996.

Orion Flare Stars: Three Decades of Activity. E. S. Parsamian, A. David Andrews. *Irish.Astr. J.*, 23, 183-184, 1996.

Armenia and Origins of Astronomy. Elma S. Parsamian. *Nation. Assoc. For Armenian Studies and Research, Journal of Armen. Studies*, v.V, N2, Massachusetts, 1995-96.

1998

Спектрофотометрия пяти планетарных туманностей, Казарян М. А., Парсамян Э. С., Паррао Л., *Астрофизика*, 41 (3), 367-376, 1998.

Вспыхивающие звезды звездных скоплениях и ассоциациях, Л. В. Мирзоян, Э. С. Парсамян, *Докл. НАН РА*, т. 98, 248-253, 1998.

1999

Карликовая Новая в Тельце, Парсамян Э. С., Гонзалес Г., Оганян Г. Б., *Астрофизика*, 42 (1), 47-52, 1999.

On Ancient Astronomy in Armenia. E. S. Parsamian. Proceed. of the Intern. Conf. "Oxford VI & SEAC 99", 77-82, La Laguna, July 1999.

2000

Спектрофотометрия трех планетарных туманностей, Казарян М. А., Парсамян Э. С., Паррао Л., Астрофизика, 43 (3), 369-376, 2000.

New Outburst in V1118 Ori. Jose Garcia Garcia, Elma S. Parsamian. Inform. Bull. Var. Stars, N 4925, Konkoly, Hungary, 2000.

2001

Գիսավորների դիտման մատենագրական նոր վկայություններ, Ա. Բարսեղյան, Է. Պարսամյան, ՀՀ Խ. Արոլյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի 51-րդ գիտաժողովի (1999թ.) նյութեր, Երևան, 2001.

2002

Функция распределения частот звездных вспышек для слабых звезд скопления Плеяды, Эльма С. Парсамян, (2002) Астрофизика, 45 (1), 23-28, 2002.

Спектральные наблюдения субфуоров (Exors) I. V 1118 Ori, Парсамян, Эльма С., Раул Мухика, Луис Коррал, Астрофизика, 45 (4), 481-488, 2002.

2003

Новые свидетельства наблюдений комет в армянских рукописях. А. Ж. Барсебян, Р. А. Епремян, Э. С. Парсамян, Докл. Академии Наук Армении, т.103, N2, 126-130, 2003.

2004

Спектральные наблюдения субфуоров (Exors). II. V 1143 Ori, Парсамян, Эльма С., Мухика Раул, Астрофизика, 47 (4). pp. 507-518, 2004.

2006

Спектральные наблюдения звезд, связанных с туманностями. I. PP 52, 57, 63, 89, Парсамян Э. С., Гаспарян Л. Г., Астрофизика, 49 (1), 61-70, 2006.

Recent Outburst of V1118 Ori (2004-2006). Garcia, Jose Garcia, Parsamian Elma S., Velazquez, Jorge Casares. Inform. Bull. Var. Stars, N 5691, Konkoly, Hungary, 2006.

2008

New Outburst of V1118 Ori (2007-2008) Garcia, Jose Garcia, Parsamian, Elma S. Inform. Bull. Var. Stars, N 5829, Konkoly, Hungary, 2008.

Վիկտոր Համբարձումյան / Виктор Амбарцумян / Victor Ambartsumian, Նվիրված Վ. Համբարձումյանի 100-ամյակին, Dedicated to 100 - Anniversary of V. Ambartsumian, compiler – Elma S. Parsamian, pp. 1-554, Yerevan, Nation. Acad. of Sci., Armenia, 2008.

2009

В. А. Амбарцумян и проблемы статистики вспыхивающих объектов, Акопян А. А., Парсамян Э. С., Астрофизика, 52 (3), 353-366, 2009.

2011

V. A. Ambartsumian and The Statistics of Flaring Objects. A. A. Akopian and E. S. Parsamian. In the book: Ambartsumian's Legacy and Active Universe, Eds. H. Harutyunian et al., Springer, New York, p. 123-135, 2011-12.

2014

Archaeoastronomy in Armenia, Astronomical Heritage in the National Culture”, E. S. Parsamian. Archaeoastronomical Meeting Dedicated to Anania Shirakatsi 1400th Birthday Anniversary. Eds. H. Harutyunian et.al, Yerevan, NASRA “Gitutyun”, 2014.

2016

New Outburst of V1118 Ori (2015-2016). Garcia, Jose Garcia, Parsamian, Elma S. Inform. Bull. Var Stars, № 6199, Konkoly, Hungary, 2016.

2017

On Ancient Astronomy in Armenia. E. S. Parsamian, Non-Stable Universe: Energetic Resources, Activity Phenomena, and Evolutionary Processes. ASP Conference Series, Vol. 511. Eds. A. M. Mickaelian et al., pp. 289-295, 2017.

2018

On Ancient Astronomy in Armenia, E.S. Parsamian, Communications of BAO, Vol. 2 (LXV), Is. 2, 2018, pp. 91-98.

2019

Catalog of cometary nebulae and related objects, ($-42^\circ < \delta < +60^\circ$), E. S. Parsamian and V. M. Petrosyan, Communications of BAO, Vol. 66, Issue 1, 2019, pp. 70 – 88.

Գիտահանրամատչելի հոդվածներ

- Միգամածությունների աշխարհում, «Գարուն», 1, 86, 1967.
- Աստղաֆիզիկական այսօր, «Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոցում», 5, 19, 1967 (համահեղ. Լ. Բ. Պողոսյան)
- Տաղանդավոր աստղագետը (Պարիս Փիշմիշ), «Հայրենիքի ձայն», 18.02.1970.
- Սպեկտրալ դասակարգում, Հայկական սովետական հանրագիտարան, հ.1, 589, 1974.
- Слово учителю, «Советская Армения», 17.09. 1974, (համահեղ. Հ. Ս. Թովմասյան)
- Вся жизнь – созидание (к 75-летию В.Амбарцумяна), «Вечерний Ереван», 17.09.1983, (համահեղ. Հ.Ս.Թովմասյան)
- Ученик об учителе, «Армения сегодня», 5, 1983, (համահեղ. Լ. Վ. Միրզոյան)
- Загадка Ангелакота, (Зорац Кар), г. Коммунист, Ереван, 1984.
- Մեծամորի աստղագիտական հուշարձանները, «Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոցում», 5, 1984, (համահեղ. Ա. Բարսեղյան).
- Բռնկվող աստղեր, «Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոցում», 4, 22, 1984, (համահեղ. Ա. Բարսեղյան).
- Հայաստանի հնագույն աստղագիտությունը, «Գիտություն և տեխնիկա», 4, 1986.
- Հալեյի գիսավորը, «Սովետական Հայաստան», 14.03.1986, (համահեղ. Ա. Բարսեղյան).

Պարիս Փիշմիշ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, 341, 1987.

Վ. Համբարձումյան, «Սովետական մանկավարժ», N1, 1989.

Гении не умирают, «Голос Армении», 19.09.2002 (համահեղ. Դ. Ս. Սեդրակյան)

Выдающийся учёный (В.А. Амбарцумян) Энциклопедия «Глобалистика», ред.: Чумаков А.Н., Мазур И.И., 31, 2003, Москва.

Четверо в самолете, не считая экипажа. Интервью с Н. Канановой, «Новое Время», 18.09.2003.

«Աշնանային մտորումներ», Էլմա Պարսամյան, 5-78, Երևան, «Արեգ» հրատարակչ., 2006.

Счастлив, кто точку Архимеда сумел сыскать в самом себе. Интервью с Н. Канановой, «Новое Время», 09.09.2008

В. А. Амбарцумян (1908-2008), Одесский Астрономический календарь, с. 229, ред. В.Г. Каретников, Одесса, 2008.

Гении не умирают (В.А. Амбарцумян). В кн. Վիկտոր Համբարձումյան / Виктор Амбарцумян / Victor Ambartsumian, Նվիրված Վ. Համբարձումյանի 100-ամյակին, կազմող – Էլմա Ս. Պարսամյան, pp. 389-401, Yerevan, Nation. Acad. of Sci., Armenia, 2008.